# Արձանագրություն N 2

ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

գ. Գայ <<15 >> <<հոկտեմբերի >> 2025թ, ժամը 11:00

Գնահատող հանձնաժողովի
նախագահ՝ Վահրամ Հարությունյան - (ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ),
անդամներ՝ Պետրոս Ավագյան- (ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավարի տեղակալ),
Միսակ Միսակյան - (ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքի ղեկավարի օգնական ),
Ավետիք Սենիքերիմյան - (ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ),
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսիկ Աղաջանյան - (ՀՀ Արմավիրի մարզի Արաքսի համայնքապետարանի գնումների համակարգող)

## Հանձնաժողովի նիստի օրակարգը

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ և Արաքս գյուղերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին:

   Զեկուցող Վ. Հարությունյան

2. Պայմանագիր կնքելու որոշման մասին:

   Զեկուցող Վ. Հարությունյան

3. Անգործության ժամկետ սահմանելու մասին:

   Զեկուցող Վ. Հարությունյան

ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ և Արաքս գյուղերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2025 թվականի հոկտեմբերի 15-ին ժամը 11:00 -ին, ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղի Ա. Խաչատրյան փողոցի թիվ 1 հասցեում:

Հրավերով սահմանված ժամկետում հայտ էր ներկայացրել մեկ մասնակից:

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի գտնվելու վայրը, ՀՎՀՀ | Մասնակցի էլ փոստի հասցեն, հեռախոս |
|---|---|---|---|
| 1 | <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ | ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գ. Բամբակաշատ, 4 փող. 2 տ ՀՎՀՀ 04417375 | no_ona@mail.ru +374 93 55 73 81 |

Մասնակից <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ-ի ներկայացրած ծրարը կազմված և ներկայացված էր սահմանված կարգին համապատասխան: Բացված ծրարում առկա էին հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և լրացված էին հրավերի պայմաններին համապատասխան, բացառությամբ հավելված 1.3-ի համաձայնագրի, որտեղ նշված էր այլ կազմակերպության անվանումը: Ծրարում բացակայում էր պատշաճ ձևով իրականացված նմանատիպ պայմանագիրը, ակտի, արձանագրության , հաշիվ ապրանքագրերի պատճենները:

ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցը ներկայացրել էր հետևյալ գնային առաջարկը՝ <<1,2>> չափաբաժինների համար:

| Չափաբաժնի համարը, անվանումը | Մասնակցի անվանումը | Գնման գինը՝ ՀՀ դրամ | Արժեք՝ ՀՀ դրամ | ԱԱՀ՝ ՀՀ դրամ | Ընդհանուր գինը՝ ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ գյուղում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ | 332690 | 330 000 | 0 | 330 000 |
| 2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Արաքս գյուղում արևային ֆոտովոլտային կայանի տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայություններ | <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ | 121485 | 120 000 | 0 | 120 000 |

**Գնահատող հանձնաժողովը որոշեց**

1. Հիմք ընդունելով <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին>> կառավարության 2017թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը, նիստը կասեցնել մինչև 2025թ հոկտեմբերի 16-ի ժամը 23:59-ը և ծանուցել մասնակից <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ-ին շտկել հավելված 1.3-ի մեջ տեղ գտած անհամապատասխանությունը և ներկայացնել պակասող նմանատիպ պայմանագիրի, ակտի, արձանագրության, հաշիվ ապրանքագրերի պատճենները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 , դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովը ՝ 2025 թվականի հոկտեմբերի 17-ին ժամը 09:30-ին շարունակեց ընդհատված թիվ 2 նիստը: Նիստին մասնակցում էին հանձնաժողովի նախագահ՝ Վ Հարությունյանը, անդամներ՝ Պ. Ավագյանը, Մ.Միսակյանը, Ա.Սենիքերիմյանը, հանձնաժողովի քարտուղար Լ. Աղաջանյանը:

Մինչև 2025 թվականի հոկտեմբերի 16-ի ժամը 24:00-ն մասնակից <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ-ն ներկայացրել էր շտկված և պակասող փաստաթղթերը:

**Գնահատող հանձնաժողովը որոշեց**

1. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ և Արաքս գյուղերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի <<1,2>> չափաբաժինների համար մասնակից <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ -ի ներկայացրած հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 , դեմ՝ 0:

2. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Գայ և Արաքս գյուղերում արևային ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի <<1,2>> չափաբաժինների համար բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակից ճանաչել <<ՆՈ ՕՆԱ>> ՍՊԸ–ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 , դեմ՝ 0:

3. Հաստատել ԱՄԱՀ-ՏՀ-ԳՀԾՁԲ-25/78 ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ ՝ 4 , դեմ՝ 0:

․ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն <<1,2>> չափաբաժնի համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 , դեմ՝ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | | Վահրամ Հարությունյան |
| Անդամներ՝ | | Պետրոս Ավագյան |
| | | Միսակ Միսակյան |
| | | Ավետիք Սենիքերիմյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | | Լուսիկ Աղաջանյան |